

Եկեղեցւոյն շուրջը գտնուած հին շինութիւնները կը ներկայացնէին աւերակակոյտ մը. «այնքան բարձրացեալ էր հողն եւ մոխիրն, որ յամենայն կողմանց շուրջ զեկեղեցեան եօթն կանգուն բարձրացեալ էր աղբիւսն եւ հողն եկեալ եւ ծածկեալ էր զհիմունս եւ զաստիճանս եկեղեցւոյն, որք կան յարտաքուստ կողմանէ»:

Առաջին գործն եղաւ եկեղեցւոյն շուրջը բլրածեւ կուտակուած հողամասերը հեռացնել: Որովհետեւ հողին փոխադրութիւնը մեծ ծախքի պիտի նստէր, լաւագոյն համարուեցաւ «ածել զջուրն ի գետոյն յորդ եւ վարար». եւ կապեցին ջուրը հողին մէկ մասին վրայ եւ մշակները փորելով հողը տուին ջուրին. այսպէս ջուրը ահագին հողամասը քերեց տարաւ թողլով տեղին վրայ միայն քարերը, զորոնք ապա շինութեանց գործածեցին: Այնուհետեւ ձեռնարկեցին եկեղեցւոյն շուրջը որոշ հեռաւորութեան լայն եւ ընդարձակ պարիսպ կանգնել, ութը բուրգերով: Ապա շինեցին դարպասներ եւ տուներ, իրենց պէտքերուն եւ հիւրերու համար. խիկ հիւսիսային եւ արեւմտեան կողմերը յօրինուեցան խուցեր միաբաններու համար. եւ հարաւակողմը՝ սեղանատուն³, փուռեր, տնտե-

³ «Ի մէջ սեղանատանն հացկերոյթի սեղանն եւ որ ի նմա այլ կահք էին, յառաջն որ շինեցաւ ի ժամանակս Մովսէսի փայտակերտ շինեցաւ. վասն որոյ եւ զիւրաւ աւերեցաւ»: Փիլիպպոս կաթողիկոս այս մասերը քարէ հրամայեց շինել: Դաւրիժ., էջ 317: